

Եղանգական պատմութեան պատմութեան պատմութեան
առաջնական գործառնութեան պատմութեան պատմութեան
ՄԱՅԻՍԱՐԺԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՄԱՅԻՍԱԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ.

Ալադիմիկ Վ. Մ. ԲԵԼԻՍԵՐԵԲԻ *

5.

Մայիսան հոգեկան շրջանի դաստիարակութեան ուսումնասիրութիւնը սկսենք ըմբռնող և շարժողութեան գործարանների կը թութիւնից։ Թէ ըմբռնող գործարանների կանոնաւոր զարգացումը ինչ նշանակութիւն ունի մարդու համար, այդ մասին հրկար խօսելու կարիք չկայ։ Բոլորին յայտնի է, թէ մայիսան մտաւոր շրջանի համար ըմբռնող գործարաններից՝ տեսողութիւնը, լսողութիւնը և շօշափելիքը ինչ մեծ նշանակութիւն ունին։ Այն ըստը, ինչ որ ձեռք ենք բերում արտաքին աշխարհից, այդ անում ենք ըմբռնող գործարանների շնորհիւ, իսկ մնացած այն ամենը, որ վերաբերում է մեր հոգեկան գործունէութեան արդիւնքներին, հանդիսանում է յետագայ վերամշակման հետևանք այն նիւթի, որ հասցնում են մեր ուղեղին ըմբռնող գործարանները։ Այստեղից պարզ երևում է, թէ ըմբռնող գործարանների ուղիղ-կանոնաւոր գործունէութիւնը ճէնց սկզբից որքան էական նշանակութիւն ունի։ Մինչդեռ մենք գիտենք, որ երեխան ծնւում է դեռ ևս չզարգացած ըմբռնող գործարաններով և միայն սիստեմատիկ-կանոնաւոր վարժեցումը հասցնում է սոցա յարաբերական կատարելութեան և նպատակայարմար գործադրութեան։ Եւ այսպէս անհրաժեշտ է գառնում ծննդեան օրից սկսած ըմբռնող գործարանների սիստեմատիկ և կանոնաւոր կրթութիւնը, որը նոյնպէս մանկական հասակի դաստիարակութեան էական սկզբունքներից մէկն է։

Պրեյէրի կարծիքով «Նորածինը սկզբում ոչինչ չի լսում, ապա լսում է շատ վատ և միայն մի քանի ձայներ, հետզհետէ ձայների քանակութիւնը շատանում է, որը ամբողջութեամբ չէ ըմբռնում նա, այլ ջոկում է նրանցից մի քանիսը. վերջապէս նա լսում է շատ ձայներ և լրիւ սակայն միշտ աւելի շուտ տարբերում է բարձր

*) Տես Արարատ № 4:

ձայները, քան ցածրերը: Իւրաքանչիւր մայր ի զուր տեղն է գործ ածում հազարաւոր բառեր, որ ասում, թոթովում կամ երգում է իւր երեխայի համար առաջ, քան նա լսել կարող է նրանցից գոնէ մէկը: Մայրն ասում է երեխային հազարաւոր բառեր կրկին այն ժամանակ, երբ նա չի հասկանում ոչ մէկը, սակայն եթէ նա չի ուղարկում բառեր այն արարածին, որն սկզբում չի լսում և բոլովին չի հասկանում նոցա, այն ժամանակ մանուկը խօսել և լսել կտուրի շատ ուշ և մեծ դժուարութեամբ»:

Կապտերել արդարացի է նկատում ասելով, որ «Մանկավարժը» ամենից առաջ պէտք է իւրացնի այն հիմնական միտքը, որ մարդու ծննդեան ժամանակ տեսողութեան գործարանը մի պատրաստի և վերջացրած բան չէ, այլ զարգանում և ձևաւորում է մանկան առաջին տարիներում հէնց մանկավարժի աչքի առջև: Բնական է, մանկավարժի աչքի առջև կատարող տեսողական գործարանի զարգացման պրօցեսը նրան հնարաւորութիւն է տալիս օժանդակել այդ պրօցեսին, ստեղծելով նրա համար բարեյաջող պայմաններ և վնասակարները հեռացնելով: Եթէ ծննդեան օրից սկսած երեխայի տեսողութիւնը մի վերջացած և ձևաւորուած գործարան լինէր, այն ժամանակ տեղ չէր մնայ մանկավարժի աղղեցութեանը, նա գործ կունենար արդէն աւարտած երեսյթի հետ, որը իրօք չենք տեսնում: Տեսողութեան գործարանի զարգացման պրօցեսի մէջ բանացի կիրառով խառնուելը ոչ միայն հնարաւոր է, այլ և միանգամայն ցանկալի: Մեր գործարանները և յատկապէս տեսողութիւնը կարող են հասնել որոշ աստիճանի զարգացման շնորհիւ շրջապատող միջավայրի անխուսափելի ազդեցութեանը. սակայն այդ զարգացումը յաճախ լինում է անրաւարար և պահանջում է կրթութիւն ու կատարելագործումն»:

Լաւ դրութեան մէջ չի գտնուում նաև նորածին մանկան շօշափման գործարանը: Թէկ մանուկը իւր ծննդեան առաջին օրեւրից սկսած հալումներին, տաքին և ցրտին, սուր գրգռումներին հականներգործում է (реагиրует), սակայն այդ գրգինների ազդեցութեան տակ նա չի անում նպատակայարմար շարժումներ, մինչդեռ այս շարժումների հետ է կապուած շօշափելիքի ճիշտ զարգացումը:

Ընդհանրապէս բոլոր ըմբռնող գործարանների զարգացումը անմիջապէս կապ ունի նոցա ծառայող մկանային համակարգութեան զարգացման հետ և հետեւապէս առաջ է գնում այն շարժումների զարգացման հետ, որոնք զեկավարում են այդ գործարանները: Այդպէս օրինակ, տեսողութեան գործարանի զարգացումը կապ ունի աչքի շարժման համակարգութեան զարգացման և յարմարուղ մկանի կծկման հետ (այն մկանն է, որի օժանդա-

կութեամբ աչքը յարմարւում է շրջակայ առարկաներին), լորդութեան զարգացումը կապ ունի ասպանդակի մկանի և գլխի շարժումների զարգացման հետ և նոյն իսկ ճաշակելիքի նրբութիւնն ու զարգացումը կախուած է լեզուի և շրթունքների շարժումների զարգացումից, ինչպէս և շօշափելիքի զարգացումը կախուած է ընդհանրապէս շարժումների համակարգութեան և մասնաւրապէս ձեռքի զարգացումից: Այդ պատճառով ըմբռնող գործարանների կրթութեան համար անհրաժեշտ է նորածնին աստիճանարար ընտելացնել հայեացքը գունաւոր և փայլուն առարկաների վրայ կենդրուացնելուն, որոնք կախում և կամաց ճօճւում են նրա աչքի առջև, պէտք է մասնկանը հնարաւորութիւն տալ խաղալ կախ արած առարկաների հետ և տալ նրան այնպիսի խաղալիքներ, որոնք բազմազան երաժշտական ձայներ են համում, օրինակ՝ զանգակներ, բօժոժներ և այլն:

Իսկ աւելի յետոյ մանկան մէջ պէտք է յատկապէս զարգացնել գոյները և երաժշտական եղանակները միմիանցից տարբերելու ընդունակութիւնը:

Առաջին նպատակին համնելու համար ձեռքի բոնելու ընդունակութեան զարգացման հետ միասին պէտք է երեխային թոյլ տալ բազմաթիւ գունաւոր գնդակների միջից ընտրել այն, որը ինքը ցանկանում է. իսկ յետոյ, երբ մանուկը կսկսի քայլել, կարելի է գունաւոր առարկաների հետ համապատասխան խաղեր սարքել, օրինակ՝ գլորել գունաւոր գնդակներ այդ նպատակի համար յարմարեցրած նեղ փորուածքով խաւաքարտի համապատասխան գոյնի գնդակները ջոկել համապատասխան գոյնի արկղների մէջ և այլն:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ սկզբում գունաւոր գնդակների թիւը պէտք է սահմանափակ լինի, հետզետէ կարելի է աւելացնել և աստիճանարար անցնել զիսաւոր գոյներից կիսագոյներին:

Ժամանակի ընթացքում կարելի է անցնել գունաւոր պատկերներ դիտելուն, այս կամ այն կարգով թղթի վրայ պատրաստի նկարներ կպցնելուն, խաւաքարտից զանազան ձևի գունաւոր խորհանարդներ շինելուն, պարզ գունաւոր պատկերների առանձին մասերը շինելուն և այլն: Աւելի ուշ, մօտ 3 տարեկան հասակից, պէտք է սկսել գունաւոր մատիտներով, ընդհանուր գծերով, ձևեր նկարելը, ապա ներկերով նկարել: Վերջապէս օգտակար է հէնց նոյն նպատակով գունաւոր թղթից զանազան ձևեր կտրել—հանելը (դուրսկարելը) խաւաքարտի վրայ կպցնելը, որ և կարելի է սկսել 3—4 տարեկան հասակում: Դորա հետ միասին ցանկալի է երեխային գոյների նիշտ անունները սովորեցնել, որը կարելի է սկսել

իսուքի զարգանալու հետո Հէնց առաջին երեխայութեան հասակում ուշադրութիւն պէտք է դարձնել աչքաչափի կանոնաւոր զարգացման վրայի, որին կարելի է հասնել այսպէս, երբ երեխայի խօսելու ընդունակութիւնը զարգանում է, նրան համեմատել են տալիս երկար և կարճ գծեր, խորհանարդներ, նոյնպէս և առարկաների ունեցած աւելի կամ պակաս հեռաւորութիւնը և այլն:

Ի՞նչ վերաբերում է լսողութեան զարգացման, արդէն հասարակ չմկշնեկոցներից աստիճանաբար պէտք է անցնել երաժշտական քննքոյշ խաղալիքներին և պարզ երաժշտական ձայներով գործիքներին, իսկ յետոյ երեխայի լսողութեան զարգացման համար իրրեագոտակար գործիք կարող է համարուել ի թիւս այլ խաղալիքների և գործիքների, փոքրիկ գրամաֆոնը՝ որը կարելի է գործ ածել երկու տարեկան հասակից: Հասկանալի է սակայն, որ գրամօֆոնը օգտակար է միայն, երբ ընտրւում են երեխայի լսողութեանը համականալի համապատասխան պարզ երաժշտական եղանակներ, մասնկական և ժողովրդական երգեր, գրամաֆոնի հետ միասին ցանկալի է աստիճանաբար երեխային երգեր սովորեցնելը:

Ի՞նչ վերաբերում է շօշափելիքին, սրա առաջին վարժութիւնը լինում է այն, որ երեխալին շօշափել են տալիս ամուր և փափուկ, տաք և սառը առարկաներ: Այդ նպատակին ամենից լաւ կարող են ծառայել բրդեայ) փայտեայ և մենտաղեայ փոքր գունաւոր գնդակները: Մետաղեան և փայտեան կարելի է տաքացնել, որով սոքա կծառայեն նաև իրեւետաք և սառը գրգռիչներ: Աւելի յիտոյ, ձեռքի բռնելու յատկութեան զարգանալու հետ, կարելի է օգտուել համաչափ սակայն տարրեր ծանրութեան գնդակներով կամ փայտեայ ձուաններով: Միւս կողմից խաղերի համար պատրաստում են տարրեր մեծութեան և ծանրութեան գնդակներ:

Երբ որ մասնկան ձեռքի բռնելու յատկութիւնը բաւտկանաշափ զարգացած է, պէտք է, նախօրօք աչքերը խփել տալով, դնել երեխայի ձեռքի մէջ զանազան պարզ իրեր (գնդակ, խորհանարդ, բանալի և այլն) և նրան գուշակել տալ, թէ այդ ի՞նչ իր է:

Աւելի լաւ է առարկաները ծածկել շորով, ապա երեխան առանց տեսնելու, շորի տակ շօշափէ առարկաները և անուանէ նոցա: Այս միջոցով բաւականաշափ վարժութիւններ անելուց յետոյ շօշափման գործարանը յաջողութեամբ զարգանում է:

Հոտոտելիքի կը թութիւն և վարժութեան համար կարելի է օգտուել զանազան մեղմ հոտերով: իսկ յետագայում կարելի է անցնել ծանօթ հոտերը որոշելուն:

Ի՞նչ վերաբերում է ճաշակելիքին՝ նա արդէն զարգանում է ընական ճանապարհով, այն է՝ կերակուր ընդունելով: այդ պատ-

ճառով էլ այս ըմբռնող գործարանը, չնայած նրա օրգանիզմի մնադառման վերաբերմամբ ունեցած էական դերին, մանկան յետագայ մտաւոր զարգացման մէջ քիչ նշանակութիւն ունի: Այսուամենայնիւ, յօդուոր օրգանիզմի կանոնաւոր մնման և առողջութեան երեխայական հասակում այս գործարանը պէտք է հեռու պահել բոլոր սուր գրգռումներից:

Հաւասար չափով և միւս ըմբռնող գործարանների առողջապահական խնամումը վաղ հասակից սկսած մանկան նպատակայրմար դաստիարակութեան մէջ էական տեղ են բռնում:

Ըմբռնող գործարանների կանոնաւոր կրթութեան նշանակութիւնը անգնահատելի է, յատկապէս, եթէ երեխայի զարգացման ժամանակ կնետեն ոչ միայն վերոյիշեալ գործարանների ֆիզիքական կացութեան և կանոնաւոր գործառնութեան, այլ և սրանց հետ անմիջապէս կապակցուած մտաւոր զարգացման ընթացքին: Բաւական չէ, որ երեխան սովորի կանոնաւոր նայել և տեսնել, այլ անհրաժեշտ է, որ նա կարողանայ դիտել, հեշտութեամբ որսալ իրերի բնորոշ յատկութիւնները, հասկանալ գոյների ներդաշնակութիւնը, հրճուել բնութեամբ:

Նոյնը կասենք և լսելիքի վերաբերեալ, կրթութիւնը չպէտք է նպատակ դնէ, որ միայն ձայները կանոնաւորապէս ըմբռնուեն, այլ և հասկացուի ձայների համերաշխութիւնը, երեխան հրճուի լաւ եղանակներով և երաժշտական գրուածքներով:

6.

Ըմբռնող գործարանների զարգացման հետ զուգընթացարար պէտք է առաջ տանել նաև բարդ շարժման գործողութիւնների զարգացումը, որի ձեռքը բերելը էապէս նպաստում է ըմբռնող գործարանների զարգացման և կանոնաւոր գործունէութեան: Կարելի է որոշակի ասել, որ առանց շարժումների ըմբռնող գործարանների զարգացումը շատ պակասաւոր կլինէր: Այսպէս օրինակ՝ կանոնաւոր աչքաչափը և տարածութեան որոշումը չի կարող իւրացուել, քանի որ մանուկը չի քայլում:

Յատկապէս պէտք է հոգ տանել այնպիսի գործողութիւնների զարգացման վրայ, որոնք հանդիսանում են մանկան ապագայ զարգացման ինքնավստահութեան և մտաւոր բարգաւաճման հաստատուն միջոցներ: Դրանք են՝ ձեռքի բռնելու կարողութիւնը, քայլելը, խօսելը, իսկ յետագայում կարգալ և գըելը: Շարժողութեան գործարանների կանոնաւոր զարգացումը ևս մենք համարում ենք երեխայական առաջին հասակի կրթութեան հիմնական սկզբունքներից մէկը:

Հնարաւորին չափ մանուկին շուտ վարժեցնել առարկաներ բռնելուն նրան այնքան մեծ դիւրութիւն է տալիս ինքնուրոյն ձեռլ նոր տպաւորութիւններ ձեռք բերելու, որ մեծ սխալ կլինէր բռնելու ընդունակութիւնը թողնել ասանց վաղաժամ վարժութիւնների:

Այս նպատակին համար երեխայի ձեռքը պէտք է տալ փոքրիկ իրեր, սկզբում կլոր ձեր և որքան կարելի է յաճախ: Հասկանալի է, որ զնդան իրերից աստիճանաբար պէտք է անցնել ուրիշ աւելի բարդ ձեռքի, մինչև որ այդ տեսակէտից չենք համսի ձեռքի բռնելու կարողութեան կատարեալ զարգացմանը: Շարժուդութեան վարժութեան համար կարելի է օգտուել նաև խաղի ձեռլ կազմակերպած մարմնամարզական շարժումներից, օրինակ՝ առաջացնել ազատ շարժումներ, սովորեցնել մատը հեշտութեամբ որոշեալ կէտի վրայ դնել և այլն:

Կարենոր է մանուկին հէնց սկզբից սովորեցնել նաև ձախ ձեռքով լաւ օգտուելը: Աստիճանական վարժութեան միջոցակ երեխան բոլորովին ազատ կերպով օգտում է ձախով այնպէս, ինչպէս և աջ ձեռքով:

Մանկան զարգացման համար քիչ նշանակութիւն չունի նաև քայլելը, որին, մեր կարծիքով, երեխային աւելի շուտ պէտք է վարժեցնել:

Այս նպատակով, որքան կարելի է յաճախ, պէտք է երեխային թևերի տակից բռնելով ոտքի կանգնեցնել և մանճակալի վրայ թռչկոտեցնել: Հէնց որ երեխայի ոտքերը ամրանան և նա կարողանայ լաւ կանգնել, հաստատուն կերպով յենուել ուների վրայ, պէտք է նրան վարժեցնել ոտքերը շարժելուն. դրա համար պէտք է ստիպել նրան ման գալ, սակայն բռնելով որ չընկնի: Այդ նպատակին կարող են ծառայել նաև մասնաւորապէս դրան յարմարեցրած աթոռները, որոնցից բռնում է մանուկը քայլելիս: Հէնց որ երեխան կարողութեամ է հաստատուն քայլել, թող այն ժամանակ նա շարժուի առանց ուրիշի օգնութեան, օրինակ՝ քայլեցնել մաքուր սաւանով ծածկուած զորդի վրայ, որը ընկնելու դէպքում երեխային ապահովում է ջարդուածքներից:

Այս վարժութիւններն ի հարկէ չպէտք է ի չարը զործազրել, որպէսզի երեխային ֆիզիքական յոգնածութիւն չպատճառենք և յոգնածութեան ամենափոքր նշանների դէպքում պէտք է նրան դրկել կամ սայլակի մէջ դնել: Երեխային զրկելով ման ածելը կամ սայլակով տանելը անխուսափելի է, որովհետև այս տեսակէտից երեխային սահմանափակելը դարձացման սկզբնական շրջանում նրան կդրկէր բազմաթիւ նոր տպաւորութիւններից և տարածութեան մասին շատ էական տեղեկութիւններից: Ընդհակառակը,

մեր կարծիքով, պէտք է խուսափել մանկան չորեքթաթ ման դաշտուց, որովհետև թէ հակառառղջապահական է և թէ կանոնաւոր քայլելու գարգանալը դանդաղեցնում է:

6.

Միանգամայն աւելորդ է յիշել, որ Փիղիքական զարգացման մէջ մանկական խաղերը էական նշանակութիւն ունին։ Մանկական խաղերի հմուտ ձևով տարրուելը մնե նշանակութիւն ունի երեխայի ընդհանուր զարգացման համար։ Խաղերը կարելի է սկսել նախ քան մանկան վազել սովորելը, յատկապէս այն, ժամանակ, երբ երեխան կարողանում է նստել։ Օրինակ երեխային կարելի է տալ զանազան գոյնի զննակներ, խորհանարգներ և ուրիշ իրեր, որոնց ցով ինքը սիրով զբաղուել է սկսում։ Աւելի լաւ կլինի եթէ մայրը կամ դաստիարակչուհին խաղի ձևով դէպի երեխան գլորեն գընչ դակներ կամ չխէչսկացող խաղալիքներ։ Այս զբաղմունքը մասնութիւն բաւականաչափ ուրախացնում է և նա թարմանում է իւր բոլոր շարժումներով։

Երիխաններին խիստ զուարձացնում է նաև այս խաղը. երբ մայրը կամ դաստիարակչուհին ծածկում են երեսը և նորից բանում, կամ ծածկում են պատի հակը և նորից երեսում; Կարելի է ի հարկէ թուել ուրիշ շատ զուարձալիքներ կամ խաղեր այն երեխանների հետ, որոնք չեն կարողանում գեռ ևս մանգալ և վաղել: Քայլել սովորելուց յետոյ խաղերը աւելի բազմազան են դառնում և որ աւելի գլխաւորն է այժմ երեխան աւելի ներգործական մասնակցութիւն է ունենում խաղերի մէջ, ուստի և նորք մեծ նշանակութիւն են ստանում երեխայի ֆիլիքական զարգացման համար: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նոյն այլ խաղերը դաստիարակող նշանակութիւն ունին և մանկան հոգեկան զարգացման համար: Սակայն այդ մասին մի ուրիշ տեղ խօսք կլինի:

Ակասած այն ժամանակից երբ երեխան կալի ման գալ, կարելի է ընտրել թագ-կենոցի կոչուած մանկական խաղը, այստեղ արդէն երեխան ինքը ներդորժական դեր է կատարում թագնուելով որևէ իրի տակ, ևաւ երեխայի խաղերից մէկն էլ գնդակ խաղայն է, գնդակը պէտք է տալ երեխային, երբ նա լաւ կվազի, Խօսելով մանկական հասակի փիզիքական կրթութեան մասին չի կարելի ուշագրութիւն չդարձնել զանազան տեսակի ֆիզիքական մարզանքների, իրեւ մանկական մարմնամարզութեան վրայ որոնք պէտք է մտնին դաստիարակութեան սխառեմի մէջ, Ամենից առաջ նորածնին առաջին ամիսներում չպէտք է միշտ պահել թաթաշորերի մէջ պարուելած, այլ երբեմն նրան բաց թողնել,

որպէսզի կարողանայ աղատ շարժումներ անել: Մանուկը հէց ինքն սկսում է ոտներով ու ձեռներով զանազան շարժումներ առնել, որոնք օգտակար են նրա ֆիզիքական առողջութեան համար: Երբ ոտները կամրապնդուին այնչափ որ կարող կլինին իրանը լաւ պահել, նրան կանգնեցրէք և թողէք որ թոշկոտի մահճակալի վրայ, ապա և քայլեցրէք թևերի տակից բռնելով, իսկ երբ երեխան արդէն ինքը կկարողանայ կանգնել, թողէք որ ինքը քայլի գործի վրայ, ապա երբ լաւ քայլել կոսվորի, ձեռքից բռնած բարձրութեան սանդուղքներով և իջեցրէք, վերջը թող նա սանդուղքներով բարձրանայ ձեր հսկողութեան տակ. երբ երեխայի ոտները կամրապնդուեն, նրան այնպիսի խաղեր սովորեցրէք, որոնք ընթացակցում են ֆիզիքական վարժութիւններով, օր. ձեռքի երար առաջ տալով վագել և այլն: 2—5 տարեկան հասակում երեխային կարելի է վարժեցնել պարզ մարմնամարզական վարժութիւնների, օրինակ՝ աղատ շարժումներ, նեղ յատակատափուակի վրայ ման գալ, պատուանդանի վրայ ամրացրած տախտակի վրայ ման գալ, պարանի վրայից թռչելը և այլն, այս բոլորը կատարուում է սկզբում երեխայի ձեռքից բռնած, իսկ յետոյ առանց որ և է օգնութեան և հետզհտէ այս վարժութիւնները բարդացնելով: Յետոյ կարելի է անցնել՝ պարանի վրայից թռչելուն, պարկած դերանի վրայից քայլելուն, երկու ձեռքը կանոնաւոր շարժելուն: ապա կարելի է իրանի շարժումներ անել խորը յետ-առաջ կռանալով, աջ ու ձախ թեքուելով սկզբում երկու, ապա և մէկ ոտի վրայ կանգնած և այլն, Մի խօսքով երեխանների վաղ հասակի ֆիզիքական դաստիարակութեան մէջ կարելի է մացնել մի շարք մարմնամարզական վարժութիւններ, աստիճանաբար նոցա բարդացնելով և շատացնելով, համապատասխան երեխայի հասակին և ուժերին: Պէտք է նկատել որ մանուկները մարմնամարզութեամբ սիրով են զրադուում, յատկապէս երբ վարժութիւնները կատարուում են միասին և չափաւոր, նոքա այդ վարժութիւնների վրայ նայում են իրեն խաղերի, որոնց ընթացքում ցոյց են տալիս որոշ մըցում: Նոյն ֆիզիքական զարգացման կարող են ծառայել նաև զանազան տեսակ ֆիզիքական աշխատանքները, օրինակ՝ սղոցելը:

Երախային բաւական շուտ կարելի է սղոց տալ, մօտաւորապէս 2 տարեկան հասակում. սղոցելն ընդհանրապէս շատ է զրադացնում երեխաններին, բայց հասկանալի է այդ պիտի կատարուի մեծերի հսկողութեամբ: Մկրատով թղթեր դուրս կտըելը կարելի է սկսել արգէն երկրորդ տարուայ վերջին կամ երրորդ տարուայ սկզբին, նոյն հասակում կարելի է սովորեցնել նաև ասեղով կարելը:

Այս բոլորի ընթացքում մանուկը ոչ միայն ֆիզիքական

վարժութիւններ է ձեռք բերում, այլ և ընտելանում է սիստեմատիկ և նպատակայարմար պարագմունքի-աշխատանքի ձևով, որը մենք նոյնագէս համարում ենք մանկական հասակի դաստիարակութեան գլխաւոր սկզբունքը:

Եթեխանների աշխատանքի սովորեցնելուն բաւական նիւթ է մատակարարում յայտնի ֆրէօրօլեան դպրոցը, սակայն այդ պարագմունքների ժամանակ պէտք է խուսափել դերմանական խիստ մանրակրկտութիւնից, որը յաճախ ձանձրացնում և յոդնեցնում է: Եթեխային վաղ հասակում կարելի է սովորեցնել իւր սենեակը հաւաքելուն, ամաններ տանել-բերելուն և այլն: Մանուկները շատ են սիրում ըստ ամենայնի նմանուել մհծերին: Հենց այս յատկութիւնից պէտք է օգտուել նոցա Փիղիքական աշխատանքի սովորեցնելիս: Ամառը աշխատանքը պիտի կազմակերպել թարմ օղում: Այստեղ կարող են գործադրուել զբաղմունքներ աւազի հետ, բահով աշխատելը, հոգից լեռնելը և այլն: Ապա պէտք է ուշադրութեան առնել խոտերի ցանելը, ծաղիկների մասին սխստեմատիկ հոգու նոցա տնկելը և ջրելը, ապա պտուղների հաւաքելը, իսկ որտեղ հանգամանքները ներում են՝ սունկեր որոնելը և այլն: Նայած կեանքի պայմաններին և երեխայի կացութեանը զրադմունքների բնաւորութիւնը կարող է զանազանակերպ լինել, սակայն սկսած ամենավաղ հասակից, երբ երեխան կարողանում է քայլել և իրեր վերցնել ամենուրեք կրթութեան նպատակը պէտք է լինի պարապութեան վանել-հեռացնելը և սիստեմատիկ աշխատանքի վարժեցնելը: Շատ վաղ հասակից կարելի է մանուկին շուտ սովորեցնել կանոնակօր մատիտ բռնել և նկարելը, որով նոքասիրով և երկար ժամանակ զբաղւում են:

Պէտք է՝ արդեօք պապացուցանել մարդու վաղ հասակից աշխատանքի վարժեցնելու կարևորութիւնը, մարդու, որի ամրող կեանքը պէտք է լեցուն լինի աշխատանքով, սկզբում իւր զարգացման, ապա իւր բնաւոնիքի, հասարակութեան և ամրող մարդկութեան համար: Պարսպութիւնը և ծուլութիւնը ոչ միայն մայր են բոլոր չարեաց, այլ և մարդու բնաւորութեան մէջ զանում են ամենավեսակար հակասոցիալական յատկութիւններ, որոնք կործանարար ազգեցութիւն են ունենում իւր իսկ անձնաւորութեան վրայ: Այդ պատճառով մարդկային անձնաւորութեան զարգացման բոլոր շրջաններում կրթութեան առանձնայատուկ հոգալ պէտք է լինի մարդուն սիստեմատիկ աշխատանքի սովորեցնելը: Սակայն հեշտ չէ աշխատանքի սովորեցնել, եթէ այդ մասին վաղ հասակից չեն հոգացել:

Պակաս կարևոր չէ երեխային ամեն բանի մէջ որոշ կարգ ու կանոնի և մաքրութեան վարժեցնելը, ամենից առաջ սովորեց-

նել քնից առաջ իւր շորերի համապատասխան դասաւորումը, խաղալիքների դարսելը, թէ մէկի և թէ միւսի մաքուր պահելը ևայլն Հասկանալի է որ այս բոլորը ձեռք է բերում աստիճանաբար, որը և մեծ նշանակութիւն ունի մեր յետազայ կեանքի համար: Կարգ ու կանոնը սկզբում պահուում է մօր կամ դաստիարակչունու միջոցաւ. իսկ յետոյ երեխային հետղնեաէ զրաւում են իւր շորերի և խաղալիքների դասաւորելու գործի մէջ, այն ժամանակ, երբ նրան չի կարելի յասձնել, որ ինքն անէ այդ բոլորը: Տիկնիկները, թէև դոցա դէմ մի քանի մանկավարժներ հակառակում են, շատ օգտակար տարրեր են երեխայի կրթութեան դործում, նրան կարգ ու կանոնի ստվորեցնելու տեսակէտից. այնպէս որ մանուկը, որը զբաղուում է տիկնիկներով, մեծ հոգատարութեամբ խնամում է նոցա, զարդարելով նոցա իւր ցանկութեամբ, դարսելով նոցա որոշ կարգով և ընդհանրապէս հոգալով նոցա մասին, ինչպէս իւր խնամքին յանձնուած կենդանի արարածների մասին, սրանց վրայ կարծես թէ ստվորում է փոքրիկ տնտեսութեան կառավարման և կարգ ու կանոն պահպանելուն:

Պէտք է ի նկատի ունենալ, որ երեխայի կանոնաւոր ֆիզիքական պահպանումը և զարգացումը ազդում է ոչ միայն նրա ֆիզիքական առողջութեան, այլ և նրա հոգեկան զարգացման վրայի եթէ երեխան լաւ և կանոնաւոր է սնուում, քիչ է լաց լինուում, աւելի հանգիստ է, դիւրազրդիտ չէ և հաւասարակշռութիւնը տեղն է: Ֆիզիքական վարժութիւնները նրան ոչ միայն ֆիզիքապէս, այլ և մոտաւորապէս աւելի առօյզ, քիչ յոգիած և շատ ինքնուրոյն են զարձնում: Այստեղ աւելի շատ քան որ և է ուրիշ տեղում արդարանում է լատինական առածը, թէ՝ «առողջ հոգին, առողջ մարմնի մէջ»:

Մինչդեռ դէպի Փիղիքական խնամքը, կանոնաւոր մնունգը, Փիղիքական վարժութիւններն ու աշխատանքն ունեցած անհոգութիւնը առաջացնում է սակաւարիւնութիւն, դիւրազրութիւն, յոդնածութիւն և էապէս վեսառում է մանկան կանոնաւոր մտաւոր դարձացումը:

— ունի բարեկ՝ պիտի մենափառ մասնաւութեան կը շարունակի
մասն այս առևտուն բայց ոչ մասնաւութեան մասն ի այս պահում
մասնաւութեան մասնաւութեան մասնաւութեան խոսքաւութեան ըստ այս
3 դրսեր զարդ վարութեան ու մասնաւութեան խոսքաւութեան ու զարդ
մասնաւութեան զարդաւութեան պահում մասն առաջաւութեան մասնաւութեան
պահում զարդ մասն

